



ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ

ՍԱՌՆԱՐԱՆ ԵՎ ՍԱՌՑԱԽՑԻԿ

Ուշադիր կարդացեք սույն ձեռնարկը մինչև սարքի շահագործմանն անցնելը և պահեք այն միշտապես ձեռքի տակ անհրաժեշտության դեպքում օգտվելու համար

HY 3A3A5A5

RU PУCCKИЙ



AFN36881840

www.lg.com

MFL42818348

Rev.00_230318 Copyright © 2018 LG Electronics Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռնարկը կարող է պարունակել Ձեր գնած մոդելից տարբերվող պատկերներ կամ բովանդակություն:
Սույն ձեռնարկը ենթակա է վերանայման արտադրողի կողմից:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	4
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՅՐԱՅԱՆԳՆԵՐ	4
ՏԵՂԱԴՐՈՒՄ	13
Նշումներ տեղաշարժման և տեղափոխման վերաբերյալ	13
Ցուցումներ տեղադրման վերաբերյալ.....	13
Չափերը և հեռավորությունը շրջապատող առարկաներից	14
Մթնոլորտային ջերմաստիճան	14
Ոտնակների կարգավորում.....	14
Շրջել դռները.....	15
ՇԱՅԱԳՈՐԾՈՒՄ	17
Մասեր և ֆունկցիաներ.....	17
Շահագործման վերաբերյալ ցուցումներ	18
Կառավարման վահանակ	20
Սառցաման	22
Ծալովի դարակ (կամ ըտնտրական).....	23
ԽԵԼԱՑԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ	24
Օգտագործել LG SmartThinQ ծրագիրը	24
ԽՆԱՄՔ	28
Ցուցումներ մաքրման համար.....	28
Դռան զամբյուղի մաքրում	28
զգրոցի մաքրում.....	29
Բանջարեղենի զգրոցի մաքրում	29
Կափարիչի զգրոցի մաքրում	30
Սառցախցիկի դարակների մաքրում.....	30
ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ ԽԱՓԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ	31
ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿԻ ՄԱՆՐԱՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	36

Տվյալ անվտանգության ուղեցույցը նախատեսված է սարքի սխալ կամ ոչ անվտանգ շահագործումից բխող անկանխատեսելի ռիսկերը կամ վնասները կանխարգելելու համար:

Ուղեցույցը բաղկացած է "ԶԳՈՒՇԱՑՈՒՄ" և "ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ" բաժիններից, որոնք բերված են ստորև:

⚠ Այս նշանը ցույց է տալիս, թե որ գործողությունները կամ դեպքերը կարող են առաջանցնել ռիսկային իրավիճակ: Ուշադիր կարդացեք այս նշանին ամրակցված հատվածը և հետևեք ցուցումներին ռիսկերից խուսափելու համար:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Սա ցույց է տալիս, որ նշված հրահանգները չկատարելը կարող է հանգեցնել լուրջ վնասվածքների կամ մահի:

⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սա ցույց է տալիս, որ նշված հրահանգները չկատարելը կարող է հանգեցնել թեթև վնասվածքների կամ սարքի խափանման:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՅՐԱՅԱՆԳՆԵՐ

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Պայթյունի, հրդեհի, մահվան, էլեկտրական ցնցումների, վնասվածքների կամ այրվածքների առաջացման ռիսկը շահագործողի համար նվազեցնելու համար, հետևեք հիմնական նախազգուշական կանոններին, այդ թվում՝

Տանը գտնվող երեխաներ

- Սույն սարքը նախատեսված չէ սահմանափակ մտավոր, ֆիզիկական ու զգայական կարողություններով կամ բավարար փորձ և գիտելիք չունեցող անձանց համար (ներառյալ՝ երեխաների), բացառությամբ այն դեպքերի, եթե նրանց տրվել է համապատասխան հրահանգավորում կամ նրանք գտնվում են պատշաճ վերահսկողության տակ նրանց անվտանգության համար պատասխանատու անձի կողմից: Պետք է վերահսկել երեխաներին՝ վստահ լինելու համար, որ նրանք չեն խաղում սարքավորման հետ:

- Եթե սարքավորումն համալրված է կողպեքով (արտադրված է միայն որոշ երկրների համար), ապա բանալին պետք է պահել երեխաների համար անհասանելի վայրում:

Տեղադրում

- Այս սարքավորման տեղափոխումը պետք է իրականացնել երկու կամ ավել անձանց կողմից՝ այն ապահով բռնելու միջոցով:
- Համոզվեք, որ վարդակը պատշաճ կերպով հողանցված է, ինչպես նաև սնուցման լարի հողանցման կոնտակտերը վնասված կամ հեռացված չեն սնուցման խրոցակի վրայից: Հողանցման վերաբերյալ մանրամասն տեղեկություն ստանալու համար դիմեք LG Electronics-ի հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոն:
- Սարքավորումը համալրված է սնուցման լարով, որում ներկառուցված է սարքավորման վերգետնյա հաղորդիչ և վերգետնյա սնուցման խրոցակ: Խրոցակը պետք է միացնել համապատասխան վարդակին, որը տեղադրված և հողանցված է տեղական նորմերին և կանոնակարգերին համաձայն:
- Եթե էլեկտրական լարը վնասված է կամ վարդակը թույլ ամրացված է, խուսափեք սնուցման լարը օգտագործելուց և դիմեք համապատասխան սպասարկման կենտրոն:
- Չի թույլատրվում միացնել սարքը այնպիսի բազմաբևեռ ադապտերի, որը չունի սնուցման լար (մոնտաժված):
- Չի թույլատրվում ձևափոխել կամ երկարացնել հոսանքի լարը:

- Խուսափեք երկարացման լարեր կամ երկբնիկ ադապտերներ օգտագործելուց: Սարքավորումը պետք է միացած լինի հոսանքի համապատասխան գծին, որը հագեցած է առանձին ապահովիչով:
- Մի օգտագործեք բազմաֆունկցիոնալ պատի վարդակ, որը պատշաճ կերպով ամրացված չէ (շարժական): Պատշաճ կերպով ամրացված (շարժական) բազմաֆունկցիոնալ պատի վարդակի օգտագործման դեպքում օգտագործեք ստաբիլ հոսանքի հզորությամբ կամ ավելի բարձր մակարդակով բազմաֆունկցիոնալ ելքային վարդակ, և բազմաֆունկցիոնալ վարդակը օգտագործեք միայն այս սարքի համար: Այս պահանջի չկատարումը՝ մի քանի վարդակի գերտաքացման հետևանքով կարող է հանգեցնել էլեկտրահարման կամ այրման: Ապահովիչի միանալու դեպքում՝ հոսանքը կարող է անջատվել:
- Տեղադրե՛ք սարքը այնպիսի վայրում, որտեղ հնարավոր է հեշտությամբ անջատել սարքի սնուցման լարը:
- Չի թույլատրվում տեղակայել խրոցակն բարձրադիր հատվածում կամ հենել սարքը խրոցակի վրա:
- Սարքը տեղադրել ամուր և հարթ հատակի վրա:
- Չի թույլատրվում տեղադրել սարքը խոնավ և փոշոտ/ աղտոտված վայրում: Չի թույլատրվում սարքը տեղադրել կամ պահել դրսի այնպիսի պայմաններում կամ այնպիսի վայրում, որտեղ այն կենթարկվի եղանակային պայմանների, ինչպես, օրինակ, արևի ուղիղ ճառագայթների, քամու, անձրևի կամ գրոյից ցածր ջերմաստիճանի ազդեցությունը:
- Չի թույլատրվում տեղադրել սարքը արևի ուղիղ ճառագայթների տակ կամ ենթարկել ջերմազատող սարքավորումներից, ինչպես, օրինակ, վառարաններից կամ տաքացուցիչներից, արտազատվող ջերմության ազդեցությանը:
- Տեղադրման ժամանակ խուսափեք սարքի հետևային հատվածը բաց կողմով թողնելուց:
- Սարքի մոնտաժման/ապամոնտաժման ժամանակ զգուշացեք, որ սարքի դուռը վայր չընկնի:
- Սարքի դուռը մոնտաժելիս/ դեմոնտաժելիս զգուշ եղեք, որպեսզի հոսանքի լարը չսեղմվի, չճզմվի և չվնասվի:
- Չի թույլատրվում միացնել խրոցակի ադապտեր կամ լրացուցիչ պարագաներ սնուցման խրոցին:

Գործարկում

- Չի թույլատրվում օգտագործել սարքը այլ նպատակների, ինչպես, օրինակ, բժշկական կամ փորձարարական նյութերի պահպանման կամ բեռնառաքման նյութերի պահեստավորման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ սարքը օգտագործվում է կենցաղային սպառման սննդամթերքի պահպանման համար:
- Ձրիեղելի դեպքում անջատեք սարքը վարդակից և դիմեք LG Electronics հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոն:
- Անջատեք սարքը վարդակից ուժեղ ամպրոպի կամ կայծակի ժամանակ կամ եթե սարքը չի օգտագործվում երկար ժամանակ:
- Չի թույլատրվում դիպչել հոսանքի լարին կամ սարքի կառավարման վահանակին թաց ձեռքերով:
- Չի թույլատրվում չափից դուրս ծալել հոսանքի լարը կամ ծանր իր դնել դրա վրա:
- Եթե ջուրը ներթափանցել է սարքի էլեկտրական մասերի մեջ, անջատեք սարքը վարդակից և դիմեք LG Electronics-ի հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոն:
- Չի թույլատրվում ձեռքով կամ մետաղական իրերով դիպչել սառը օդ արտազատող հատվածին, կափարիչին կամ հետնամասում տեղակայված ջերմահեռացնող վանդակին:
- Չի թույլատրվում ավելորդ ուժ կիրառել կամ սեղմել սարքի ետին կափարիչը:
- Չի թույլատրվում սառնարանի մեջ պահել կենդանիների, ինչպես, օրինակ, տնային կենդանիների:
- Ուշադիր եղեք սարքի դուռը բացելիս կամ փակելիս, երբ մոտակայքում երեխաներ կան: Դուռը կարող է դիպչել երեխային և վնաս պատճառել:
- Թույլ մի տվեք, որ երեխաները սողոսկեն սարքի մեջ: Սարքի մեջ հայտնված երեխան կարող է հայտնվել ծուղակային իրավիճակում և նրա մոտ կարող է սկսվել շնչարգելություն:
- Չի թույլատրվում տեղադրել սարքի վրա ծանր կամ փխրուն առարկաներ, հեղուկով, վառելանյութով լցված տարաներ/ամաններ, դյուրավառ իրեր (մոմեր, լամպեր) կամ տաքացնող իրեր (տաքացուցիչներ, վառարաններ և այլն):

- Գազի (իզոբուտան, պրոպան, բնական գազ և այլն) արտահոսքի դեպքում մի դիպչեք սարքին կամ խրոցակին, անմիջապես օդափոխեք տարածքը: Այս սարքը որպես սառցագենտ օգտագործվում է էկոլոգիապես մաքուր գազ (իզոբուտան R600a): Չնայած այն օգտագործում է քիչ քանակությամբ գազ, այնուամենայնիվ, վերջինս դյուրավառ է: Սարքի տեղափոխման, տեղադրման կամ շահագործման ընթացքում գազի արտահոսքը կարող է առաջացնել հրդեհ, պայթյուն կամ վնասվածքներ կայծերի բռնկումից:
- Չի թույլատրվում սարքի մերձակայքում օգտագործել կամ պահուստավորել դյուրավառ կամ պայթյունավտանգ նյութեր (եթեր, բենզին, ալկոհոլ, քիմիկատներ, բնական սեղմված գազ, միջատասպան նյութեր, դյուրավառ սփրեյեր, օդը թարմացնող միջոցներ, կոսմետիկա և այլն):
- Եթե սարքը արձակում է տարօրինակ ձայներ, հոտ կամ սարքից ծուխ է դուրս գալիս, անմիջապես անջատեք այն հոսանքից և դիմեք LG Electronics-ի հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոն:

Սպասարկում և խնամք

- Սարքը մաքրելիս կամ ներսի լամպը (որտեղ այն տեղադրված է) փոխարինելիս անհրաժեշտ է անջատել սարքը հոսանքից:
- Սարքը հոսանքի վարդակին միացնել փոշին և խոնավությունը ամբողջությամբ հեռացնելուց հետո միայն:
- Չի թույլատրվում կտրուկ քաշել սնուցող լարը հոսանքից անջատելիս: Մշտապես ամուր բռնեք հոսանքի լարը և վարդակից անմիջապես քաշեք դուրս:
- Չի թույլատրվում սարքի արտաքին կամ ներքին մակերեսի մաքրման համար օգտագործել դյուրավառ միջոցներ (ինչպես օրինակ՝ ատամի մածուկ, ալկոհոլ, լուծիչ, բենզին, դյուրավառ հեղուկներ, հղկանյութեր):
- Չի թույլատրվում սարքի մաքրման համար օգտագործել կոշտ մակերես կամ մետաղյա պարունակություն ունեցող խոզանակներ, լաթեր կամ սպունգեր:

- Սարքավորման ապամոնտաժման, վերանորոգման կամ ձևափոխման իրավունքը բացառապես վերապահված է LG Electronics-ի սպասարկման կենտրոնի որակավորված մասնագետներին: Դիմեք LG Electronics հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոն, եթե պատրաստվում եք տեղափոխել կամ տեղադրել սարքը այլ վայրում:
- Սարքի ներքին մակերեսը չորացնելու համար չի թույլատրվում օգտագործել ֆեն: Վատ հոտերը չեզոքացնելու համար չի թույլատրվում սարքի ներում մոմ վառել:

Ջեռացում և ոչնչացում

- Սարքը դեն նետելու ժամանակ հեռացրեք դռան կիպարար միջադիրներ՝ թողնելով գորոցները և զամբյուղները իրենց տեղերում, իսկ երեխաներին հեռու պահեք սարքից:
- Ոչնչացրեք փաթեթավորման նյութերը (պլաստիկ պարկեր, փրփրապլաստ) երեխաներին անհասանելի վայրում: Փաթեթավորման պարագաները կարող են հանգեցնել շնչահեղձության:

Տեխնիկական անվտանգություն

- Սարքի օդափոխման անցքերը թե սարքի ներդրանքում և թե ներկառուցված հատվածում պետք է զերծ պահել արգելափակումից:
- Չի թույլատրվում սարքի սննդի պահուստավորման խցիկներում օգտագործել էլեկտրական սարքավորումներ, բացառությամբ այն դեպքերի, եթե սույն սարքավորումները ցուցված են արտադրողի կողմից:
- Սարքում օգտագործվող սառցագենտը ու մեկուսիչ գազը պետք է ոչնչացնել հատուկ ընթացակարգով: Խորհրդանկցեք սպասարկող կամ նմանօրինակ որակավորում ունեցող մասնագետի հետ ոչնչացումից առաջ:
- Սույն սարքը պարունակում է քիչ քանակությամբ իզոբուտան ֆրեոն (R600a), էկոլոգիապես համադրելի բնական գազ, որն օժտված է դյուրավառ հատկանիշներով: Տեղափոխման և տեղադրման ընթացքում անհրաժեշտ է ստուգել և համոզվել, որ սառցագենտի շրջանառության համակարգը վնասված չէ և աշխատում է պատշաճ կերպով:

- Խողովակներից արտահոսող սառցագեները կարող է հանգեցնել պայթյունի:
- Եթե հայտնաբերել եք արտահոսք, խուսափեք կրակի բաց օջախներից կամ բռնկման հնարավոր աղբյուրներից, մի քանի րոպե օդափոխեք այն սենյակը, որտեղ տեղադրված է սառնարանը: Խողովակներից սառցագենտի արտահոսքի դեպքում դյուրավառ գազի և օդի խառնուրդի վերահաս վտանգը կանխարգելելու համար անհրաժեշտ է, որ սենյակի չափսը, որտեղ տեղադրված է սարքը, համապատասխանի օգտագործվող սառցագենտի քանակին: Սենյակը չափսերով պետք է լինի 1 մ² սարքի ներսում R600a սառցագենտի յուրաքանչյուր 8 գրամի համար:
- Ձեր սարքում օգտագործվող սառցագենտի քանակը նշված է սարքի ներսում տեղադրված նույնականացման ցուցանակի վրա:
- Չի թույլատրվում գործարկել սարքը, որի վրա առկա են վնասված մասեր: Եթե ունեք կասկածներ, դիմեք վաճառողին:
- Սույնը սարքը նախատեսված է բացառապես տնային կամ նմանօրիանկ պայմաններում օգտագործելու համար: Չի թույլատրվում այն օգտագործել առևտրային կամ քեյթրինգի նկատառումներով, ինչպես նաև գործարկել որևէ շարժական միջոցի վրա, ինչպես, օրինակ, քարավանի կամ նավի վրա:
- Չի թույլատրվում սարքի ներսում պահել պայթյունազուսուցիչ իրեր, ինչպիսիք են՝ անրոզոլի տարրեր, որոնք օժտված են արտամղիչ պայթյունազուսուցիչ հատկանիշներով:

⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թեթև վնասվածք ստանալու ռիսկը նվազեցնելու, սարքը խափանումից, սարքի սխալ կիրառումից բխող վտանգներից խուսափելու համար հետևեք անվտանգության հիմնական կանոններին, այդ թվում ստորև նշվածներին՝

Տեղադրում

- Արգելվում է շրջել, քաշել կամ հրել սարքը տեղափոխման ժամանակ:
- Սարքը տեղաշարժելիս զգուշացեք, որպեսզի մարմնի որևէ մաս, ձեռք կամ ոտք, չմնա սարքավորման տակ:

Գործարկում

- Արգելվում է սառցախցիկում թաց ձեռքերով դիպչել սառեցված սննդամթերքին կամ մետաղական մասերին : Առկա է ցրտահարման վտանգ:
- Սառցախցիկում, գզրոցներում կամ սառցամանում մի տեղադրեք ապակե տարաներ, շշեր կամ պահածոյացված տուփեր (հատկապես գազավորված բաղադրությամբ), որոնք զրոյից ցածր աստիճանի դեպքում կարող են սառցակալել:
- Սարքի դռան կամ գզրոցների ճակատային հատվածում տեղադրված թրծված ապակին կարող է վնասվել ուղղակի ներգործությունից: Եթե այն կոտրվել է, խուսափեք թաց ձեռքերով դրան կպնելուց, քանզի դա կարող է հանգեցնել վնասման:
- Չի թույլատրվում կախվել սարքի դռներից, պահոցի խցիկից, հենվել կամ մագլցել գզրոցների վրա:
- Չի թույլատրվում պահուստավորել մեծ քանակությամբ ջրի շշեր կամ գարնիրային տարաներ դռան հատվածում տեղադրված գամբյուղների մեջ: Սույն գամբյուղները կարող են կոտրվել կամ հնարավոր է , որ Ձեր ձեռքը անզգույշ կերպով հարվածի շրջակա գամբյուղներին՝ հանգեցնելով վնասվածքի:
- Դասավորեք սննդամթերքը սարքի ներսում հավուր պատշաճի:
- Չետևեք, որպեսզի կենդանիները չկրծեն հոսանքի լարը կամ ջրի խողովակը:
- Չի թույլատրվում ավելորդ ուժ կիրառել սարքի դուռը բացելիս կամ փակելիս:
- Եթե սարքի դռան ծխնին վնասված է կամ թերի է գործում, դադարեցրեք սարքի շահագործումը և դիմեք լիազորված սպասարկման կենտրոն:
- Խուսափեք սառցագենտի պարունակը վնասելուց:
- Չի թույլատրվում սարքի ներսում տեղադրել որևէ էլեկտրոնային սարքավորում (տաքացուցիչ կամ բջջային հեռախոս):

- Չի թույլատրվում մաքրել ապակե դարակները ու կափարիչը տաք ջրով, երբ դրանք սառած վիճակում են: Դրանք կարող են կոտրվել ջերմաստիճանի կտրուկ փոփոխության ազդեցությանը ենթակվելուց:
- Չի թույլատրվում ուտել սառեցված սննդամթերքը սառցախցիկից անմիջապես հանելուց հետո:
- Սարքի դուռը բացելիս կամ փակելիս զգուշացեք, որպեսզի ոտքը կամ ձեռքը չմնան դռան տակ;

Սպասարկում և խնամք


- Չի թույլատրվում դարակները տեղադրել գլխիվայր շուռ տված: Դարակները կարող են ընկնել՝ հանգեցնելով վնասվածքի:
- Սառցափառը սարքից հեռացնելու համար դիմեք LG Electronics-ի հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոն:
- Չեռացրեք սառցախցում տեղադրված սառցամանի սառույցը հոսանքի երկարատև անջատումների ժամանակ:

Նշումներ տեղաշարժման և տեղափոխման վերաբերյալ

- Չեռացրեք սարքում պահված ամբողջ սննդամթերքը: Այնուհետև, ժապավենով ֆիքսեք հեշտ կոտրվող մասերը, ինչպես, օրինակ, դարակները ը և դռան բռնակը: Այդ ցուցումին չհետևելու դեպքում սարքը կարող է վնասվել:
- Չեռացրեք խրոցը վարդակից, տեղադրեք ու ամրացրեք այն սարքի հետևյալին մասում կամ վերնամասում գտնվող կեռիկից : Այդ ցուցումին չհետևելու կարող է հանգեցնել խրոցակի վնասմանը կամ հատակի քերծմանը:
- Սարքի տեղափոխումը պետք է իրականացվի երկուսից ավել անձանց կողմից ամենայն զգուշությամբ: Սարքը չափազանց ծանր է, և դրա վայր զցումը կարող է հանգեցնել վնասվածքների, ինչպես նաև սարքի վնասման:
- Սարքը երկար հեռավորության վրա տեղափոխելիս սարքը պետք է լինի ուղղածիք դիրքով: Սարքը կարող է ընկնել՝ հանգեցնելով խափանման: Չի թույլատրվում տեղափոխել սարքը պառկած վիճակում, քանի որ դա կարող է հանգեցնել սառցագեղատի շրջանառության խափանմանը, երբ սարքը հետ բերվի ուղղածիք դիրքի և գործարկվի:


Ցուցումներ տեղադրման վերաբերյալ

- Սարքը տեղադրել ամուր և հարթ հատակի վրա:
 - Եթե սարքը տեղադրվում է անհարթ հատակի վրա, սա կարող է հանգեցնել թրթռման և աղմուկի, ինչի արդյունքում սարքը կարող է ընկնել և վնասել մոտակայքում գտնվողներին: Սա կարող է նաև հանգեցնել դռների ոչ ճիշտ փակմանը և շահագործման ընթացքում առաջացնել խոնավություն սարքի ներսում:
 - Եթե սարքի առաջնամասը կամ հետնամասը հավասարահարթված չեն, ապա կարգավորեք առջևի ոտնակները՝ հավասարահարթացնելու համար: Բարդ դեպքերում սարքը հատակին ամրացրեք փայտեղենի բարակ կոտրուկներով:
- Խուսափեք սարքը ջեռուցման համակարգերի մոտ կամ այնպիսի վայրերում տեղադրելուց, որտեղ առկա է արևի ուղիղ ճառագայթային ներգործություն կամ խոնավություն:
- Միացրեք հոսանքի լարը (կամ խրոցը) վարդակին: Խուսափեք միևնույն վարդակում մի քանի սարքը միացնելուց:
- Չոսանքի լարը (կամ խրոցը) վարդակին միացնելուց հետո սպասեք երկու կամ երեք ժամ մինչև սննդամթերք պահուստավորելը: Եթե տեղադրեք սննդամթերքը մինչև սարքի ամբողջական սառեցումը, սննդամթերքը կարող է փչանալ:
- Սարքը տեղադրելուց հետո հոսանքի խրոցը միացրեք էլեկտրական վարդակից: Սարքը տեղաշարժելուց կամ նետելուց առաջ հոսանքի խրոցը անջատեք էլեկտրական վարդակից:
- Տեղադրեք սենյակիչներ սարքի հետնապատնեշի վերին անյուններում, ինչպես նկարագրված է Պատկեր 1-ում: Սենյակիչները (2) կարող եք գտնել սարքի խցիկի զգոցում:
 - Նկ1՝ Մինչև վերջ սեղմեք սենյակիչը (2) մասի մեջ (1): Չրեք սառնարանը պատի մոտ:



Չափերը և հեռավորությունը շրջապատող առարկաներից

- Մոտ գտնվող առարկաներից շատ փոքր հեռավորության վրա գտնվելը կարող է հանգեցնել սառեցման կարողության վատթարացմանը և նպաստել էլեկտրաէներգիայի սպառման ծավալների աճին: Սարքը տեղադրեք ամեն պատից ավելի քան 50 մմ հեռավորության վրա:



	GA-B389S***	GA-B429S***
	Չափերը՝	
A	595	
B	1737	1907
C	643	
D	-	
E	643	
F	-	
G	1010	
H	900	

Մթնոլորտային ջերմաստիճան

- Սարքը նախատեսված է սահմանափակ մթնոլորտային ճնշման դիսպոզիցիայի շահագործելու համար՝ կախված կլիմայական գոտու առանձնահատկություններից: Խուսափեք սահմանված դիսպոզիցիայի գերազանցող ջերմային պայմաններում շահագործելուց:
- Սարքի գնվելու վայրը, մթնոլորտային ջերմաստիճանը, դռների բացման հաճախականությունը և այլն կարող են ազդել սարքի ներքին ջերմաստիճանի վրա:
- Կլիմայի դասը կարող էք գտնել դասակարգման պիտակի վրա:

Կլիմայի դասը	Մթնոլորտային ջերմաստիճանի դիսպոզիցիա °C--ով
SN (Տևական բարեխառն)	+10 - +32
N (Բարեխառն)	+16 - +32
ST (Մերձակրադարձային)	+16 - +38
T (Արևադարձային)	+16 - +43

*Ավստրալիա, Ջնդկաստան, Քենիա

Նշումներ

- SN-ից մինչև T-ի ցուցասանդղակի սահմաններում սարքերը նախատեսված են օգտագործել երբ շրջակա միջավայրի ջերմաստիճանը 10 °C- ից մինչև 43 °C է:

Ոտնակների կարգավորում

Թրթռումից խուսափելու համար սարքը պետք է հավասարահարթեցվի:

Անհրաժեշտության դեպքում կարգավորեք հավասարահարթեցման պտուտակները անհավասար հատակի հաշվին փոխհատուցելու համար:

Առջևային հատվածը պետք է մի թեթև ավելի բարձր լինի, ինչը կնպաստի դռան փակմանը:

Հավասարահարթեցնող պտուտակները հնարավոր է կարգավորել կորպուսը մի թեթև թեքելով:

Պտուտակները պտտեցրեք ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:

(↺), որպեսզի սարք հնարավոր լինի բարձրացնել ժամացույցի սլաքի ուղղությամբ(↻), որպեսզի իջեցվի:

Շրջել դռները

Ձեր սարքը հագեցած է ռեվերսիվ դռներով: Որպեսզի հնարավոր լինի դուռը բացել թե՛ աջ ձեռքով և թե՛ ձախ՝ ձեր խոհանոցի դիզայնին համապատասխան, հետևեք ցուցումներին:


Անհրաժեշտ գործիքները.

- 10 մմ և 6 մմ չափերի մանեկադարձիչներ
- 5 մմ վեցանկյուն մանեկադարձիչ
- Խաչաձև պտուտակահան


Նշումներ

- Այնուհանդերձ, եթե ցանկանում եք տեղադրել ձեր սարքը զույգերով, պարտադիր դիմեք սպասարկման կենտրոն: Տեղադրումը ներառված չէ երաշխիքային սպասարկման մեջ:
- Սառնարանի դռները շրջելուց առաջ անջատեք սարքը և հեռացնեք սննդամթերքն ու բոլոր շարժական պարագաները, ինչպիսիք են՝ սառնարանի գզրոցներն ու դարակները:
- Սառնարանը մի պահեցրեք հատակին:
- Խուսափեք սառնարանի ապամոնտաժման և մոտաժման ընթացքում դուռը վայր չգցելուց:


- 1 Զեռացնել կափարիչի սռնակը (1) և անջատել միակցիչ մալուխը (5) (միայն 2 տեսակի կառավարման համակարգով մոդելների համար): Զետ պտտեցնել հեղյուսները (3)՝ ամրացնելով վերին սռնակը (4), զգուշորեն հեռացնել դուռը միջին սռնակից (17): Զեռացնել խրոցակը (8):




- 2 Զեռացնել դռան արտաքին ծածկը (7) (միայն 2 տեսակի կառավարման համակարգով մոդելների համար), մալուխը հանել (5) և տեղադրել դռան հակառակ կողմից: Դռան արտաքին ծածկը (7) դնել իր տեղում: Զեռացնել պլաստմասե արտաքին փաթաթումը (6), սառնարանային խցիկի դռնից (A): Զետ պտտեցնել սառնարանի դռան տակ գտնվող պտուտակը (10) և սահմանափակիչը տեղաշարժել դեպի դռան (9) հակառակ կողմ: Պտտեցրեք պտուտակը (10): Տեղափոխել պլաստմասե արտաքին փաթաթումը (6) և (14) (միայն 1 տեսակի կառավարման համակարգով մոդելների համար) դեպի հակառակ կողմ:




- 3 Օգտագործելով հարթ պտուտակահան՝ սեղմել և հեռացնել խուլիերը (12) առջևի վահանակից (11) և հետ պտտեցնելով պտուտակները՝ (13), հեռացնել վահանակը (11), տեղափոխել մալուխը (15) հակառակ կողմ (միայն 2 տեսակի կառավարման համակարգով մոդելների համար): Վահանակի տեղադրումից հետո (11) ամրացնել պտուտակները (13) և ծածկերը փակել խուլիերով (12):




- 4** Հետ պտտեցնել միջին սռնակի (17) հեղյուսները (16) 5 մմ վեցանկյունով, հեռացնել միջին սռնակը և հեռացնել սառցախցիկի ներկառուցված դուռը (B): Հեռացնել խրոցը (18) և տեղադրել այն հեռացված առջևի սռնակի տեղում:




- 5** Հետ պտտեցնել վերին սռնակի (20) պտուտակը (19)՝ ժամ-սլաքի ուղղությամբ և պտտել ներս՝ հակառակ ուղղությամբ: Հետ պտտեցնել հեղյուսները (21)՝ վերին սռնակն ու հեղյուսն (22) ամրացնելով սառնարանի խուփի վրա: Հետ պտտնակել դռան հետևի հեղյուսները (10), որն ամրացնում է (23) սառնախցիկի դուռը: Տեղափոխել վերին ծածկը (24) դեպի հակառակ կողմ: Պոկել պաշտպանիչ կպչուն շերտը (25) և կպցնել այն հակառակ կողմի անցքի վրա:



- 6** Հետ պտտնակել դռան ստորին մասի հեղյուսը (10), որն ամրացնում է սառցախցիկի դռները (9), սահմանափակիչը տեղաշարժել (9) դեպի հակառակ կողմում հատուկ նշանակված տեղը և արգելափակել այն: Հակառակ կողմ պտտել կախել հատուկ նշված տեղում՝ դռան մոտ (23) և արգելափակել:




- 7** Հեռացված վերին հանգույցը կցել (20) ծածկի հակառակ կողմում գտնվող անցքերի վրա և հեղյուսներով ամրացնել (21): Հեղյուսները պտտնակով ամրացրել (22) ծածկի հակառակ կողմից: Սառնարանի դուռը տեղադրել ստորին հանգույցների առանցքի վրա: Լայնացնել հեռացված միջին հանգույցի (17) առանցքը և ամրացնել այն հեղյուսներով (16) (հեղյուսներն ամրացնել զգուշորեն՝ դռան քերծվածքներից խուսափելու համար):



- 8** Տեղադրել սառնարանային ներկառուցված դռները՝ ներքևում համապատասխանեցնելով անցքերի և միջին հանգույցի առանցքի հետ (17): Տեղադրել վերին հանգույցը (26)՝ սառնարանային խցիկի դռան առանցքը համապատասխանեցնելով վերին անցքի հետ: Միացնել մալուխի միակցիչները (5) (միայն կառավարման վահանակի 2 մոդելների համար): Ամրացնել վերին հանգույցը (26)՝ օգտագործելով հեղյուսներ (3): Տեղադրել վերին հանգույցի ձախ ծածկը (27): Տեղադրել խրոցը (28): Սառնարանի փաթեթում ընդգրկված են (26), (27), (28) մասերը:

Մասեր և ֆունկցիաներ



- 1 Կառավարման վահանակ**
Սառցախցիկի և սառնարանի ջերմաստիճանը կարգավորելու համար:
- 2 Սմարթ Դիագնոստիկա**
Օգտագործեք այս ֆունկցիան LG Էլեկտրոնիքս հաճախորդների սպասարկման կենտրոնին միանալու համար, երբ սարքի հետ խնդիր է առաջացել կամ անհրաժեշտ է ճշգրիտ փաստորոշում:
- 3 Լուսադիոդային լամպ**
Լուսադիոդային լամպերը միանում են սարքի ներսում, երբ բացում եք դուռը:
- 4 Սառնարանի դարակ**
Այստեղ են պահվում սառեցված սննդամթերք և այլ պարագաներ:
 - Չնարավոր է կարգավորել դարակի բարձրությունը՝ դարակը տեղադրելով այլ բարձրության ակոսիկների մեջ:
 - Բարձր խոնավային պարունակությամբ մթերքը պահեք դարակի առջևի հատվածում:
 - Դարակների փասացի թիվը տարբերվում է մոդելից մոդել:
- 5 Ծալովի դարակ (կամըռնտրական)**
Այստեղ են պահվում սառեցված սննդամթերք և բարձր չափսերի առարկաներ:
- 6 Բարջարեղենի Դարակ**
Այստեղ են պահվում բանջարեղենն ու միրգը, ինչը նպաստում է թարմության պահպանմանը:
- 7 Կաթնամթերքի անկյուն**
Այստեղ կարող եք պահուստավորել կաթնամթերք, ինչպես, օրինակ, կարագ, պանիր:
- 8 Սառնարանի դռան զամբյուղ**
Այստեղ են պահվում փոքր չափսերի սառեցված սննդամթերք, խմիչքներ կամ սոուսի կոնտեյներներ:
- 9 Չավկիթի համար նախատեսված սկուտեղ**
Այստեղ կարող եք պահուստավորել հավկիթները:
- 10 Սառցախցիկի գզրոց**
Նախատեսված է սառնարանի թեքությունը կարգավորելու համար:
- 11 Կարգավորվող ոտնակներ**
Նախատեսված է սառնարանի թեքությունը կարգավորելու համար:

Նշումներ

- Սարքի արտաքին տեսքը կամ բաղադրամասերը կարող են տարբերվել մոդելից մոդել:

Շահագործման վերաբերյալ ցուցումներ

- Չի թույլատրվում ջրի դիսպենսերի բաքում ջրից բացի այլ խմիչքներ պահպանել:
- Պետք է հիշել, որ սառնարանի ներսում հնարավոր է սառցակալում, եթե դուռը փակ չէ պատշաճ կերպով, եթե ամառվա ընթացքում խոնավությունը բարձր է, կամ եթե սառցախցիկի դուռը հաճախ է բացվում:
- Համոզվեք, որ գզրոցների վրա պահվող սննդամթերքի և դան զամբյուղի միջև կա բավականաչափ հեռավորություն սարքի դուռը ամբողջությամբ փակելու համար:
- Դուռը բացելու ժամանակ սարքը կլանում է տաք օդ, ինչի հետևանքով ներսի ջերմաստիճանը կարող է բարձրանալ:
- Չի թույլատրվում ավելորդ ուժ գործադրել սարքի դուռը բացելիս կամ փակելիս:
- Լուսադիտողային լամպը նախատեսված է բացառապես կենցաղային սարքավորումների մեջ օգտագործման համար և չի կիրառվում տան սենյակների լուսավորության համար:
- Եթե նախատեսել եք սարքը երկար ժամանակ չշահագործել, սննդամթերքը հանեք սարքի միջից և և անջատեք հոսանքի լարը: Ներսից մաքրեք և դռները թեթևակի կիսաբաց թողեք, որպեսզի կանխեք բորբոսի գոյացումը:

Էներգախնայողության վերաբերյալ խորհուրդներ

- Հետևեք, որ սառնարանում պահվող սննդամթերքի միջև բավականաչափ հեռավորություն լինի: Սա ապահովվում է սառը օդի հավասարաչափ շրջանառություն և կրճատում է էլետրաէներգիայի սպառումը:
- Տաք ուտեստները սարքի մեջ դրեք միայն դրանք պաղեցնելուց հետո, որպեսզի կանխեք սառցակալումը կամ ցողի առաջացումը:
- Սննդամթերքը սառցախցի մեջ տեղադրելիս, կարգավորեք սառցախցի ջերմաստիճանը, քանի որ վերջինս պետք է լինի ավելի ցածր, քան տվյալ պահին ցուցադրված է սարքի վրա:
- Խորհուրդ չի տրվում սարքի ջերմաստիճանը կարգավորել եղածից ավելի ցածր: Նորմալ կլիմայական պայմաններում սառույցի արտադրման համար անհրաժեշտ է -20 °C կամ ավելի ցածր ջերմաստիճան:
- Սննդամթերքը մի դրեք սարքի խցիկում տեղադրված ջերմաստիճանի սենսորի մոտակայքում: Սենսորից պահպանեք առնվազն 3 սմ հեռավորություն:
- Խնդրում ենք նկատի ունենալ, որ ապաստանեցումից հետո ջերմաստիճանի աճը ունի իր թույլատրելի սահմանը ըստ սարքի բնութագրի: Եթե ցանկանում եք նվազագույնի հասցնել ջերմաստիճանի բարձրացման ներգործությունը սննդի վրա, փաթեթավորեք սննդամթերքը մի քանի շերտերի:
- Սարքի ավտոմատ ապաստանեցման համակարգը նպաստում է նրան, որ սարքի խցիկը գերծ մնա սառցակալումից նորմալ աշխատանքային պայմաններում:

Սննդամթերքի արդյունավետ պահպանում

- Պահպանեք սառեցված սննդամթերքը սառնարանում կամ սառցախցիկում պատշաճ կերպով փակված կոնտեյներներում:
- Ստուգեք պիտանելիության ժամկետը և պիտակը (սննդի պահպանման ցուցումներ) սննդամթերքը սարքում տեղադրելուց առաջ:
- Չի կարելի պահուստավորել սննդամթերքը չորս շաբաթից ավել, եթե այն ենթակա արագ փչացման ցածր ջերմաստիճանի պայմանում:
- Քնելուց անմիջապես հետո սառեցված սննդամթերքը տեղադրեք սառնարանի կամ սառցախցիկի համապատասխան խցիկում:
- Խոսափեք արդեն ամբողջությամբ հալեցված սննդամթերքի կրկնասառեցումից: Կրկնասառեցումը կհանգեցնի սննդամթերքի համայնի և սննդային հատկանիշների նվազեցմանը:
- Չի թույլատրվում բանջարեղենը թերթի մեջ փաթաթել և այդ ձևով դնել սարքի մեջ: Թերթի տպագրական և նմանատիպ այլ բաղադրիչ նյութերը կարող են աղտոտել և փչացնել սննդամթերքը:
- Խոսափեք սարքը ծանրաբեռնելուց: Բեռներ 70 %-ից ավելի քիչ տարածություն: Սառնարանի գերբեռնման ժամանակ սառը օդի շրջանառությունը իրականացվում է ոչ լրիվ ծավալով:
- Պահեցրեք տաք ուտեստները սարքի մեջ դնելուց առաջ: Եթե սարքի մեջ դնել չափից շատ տաք ուտեստներ, ապա դա կհանգեցնի սարքի ներսում ջերմաստիճանի բարձրացմանը և բացասաբար կազդի սարքում պահվող սննդամթերքի վրա:
- Եթե սննդամթերքի պահպանման ջերմաստիճանը չափազանց ցածր է ընտրված, սննդամթերքը կարող է սառցակալել: Մի սահմանել ավելի ցածր ջերմաստիճան, քան անհրաժեշտ է, եթե ցանկանում եք՝ սննդամթերքը պահպանվի ըստ պատշաճի:
- Մշտապես մաքուր պահեք սարքը:
- Եթե սարքի մեջ առկա է սառույց, խցիկում մի պահեք բարձր խոնավություն պարունակող բանջարեղեն և պտուղներ, քանի որ դրանք կարող են սառչել ցածր ջերմաստիճանի ժամանակ:
- Հոսանքի անջատումների դեպքում զանգահարեք էլեկտրոցանց ընկերություն և հարցրեք, թե որքան ժամանակ կտևի:
 - Հոսանքի անջատման ժամանակ խոսափեք դռների բացումից:
 - Երբ էլեկտրասնուցումը վերականգնվի, ստուգեք սննդի վիճակը:

Առավելագույն սառեցման հզորություն

- Էքսպրես Սառեցում ֆունկցիան ապահովում է սառցախցիկում սառեցման առավելագույն հզորություն:
- Այն սովորաբար տևում է մինչև 24 ժամ և ավտոմատ անջատվում է:
- Եթե անհրաժեշտ է առավելագույն սառեցում, նախապես յոթ ժամ շուտ միացրեք Express Freeze ռեժիմը մինչ թարմ սննդամթերքի պահուստավորումը սառցախցիկում:

Առավելագույն պահուստավորում

- Օդի բարելավված շրջանառություն ապահովելու համար տեղադրեք բոլոր գզրոցները:
- Սննդամթերքի մեծ պաշարներ պահուստավորելու անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է հանել սառցախցիկի բոլոր գզրոցները բացառությամբ ներքևի գզրոցի, իսկ սննդամթերքը պետք է տեղադրել անմիջապես սառցախցիկի գզրոցների վրա:


Նշումներ

- Գզրոցները հանելիս ամբողջությամբ հեռացրեք սննդամթերք գզրոցներից: Չգուշորեն հանեք գզրոցները՝ օգտագործելով բռնակները: Չգուշացեք ինքնավաստումից:
- Յուրաքանչյուր գզրոցի ձևը կարող է տարբեր լինել, ուստի տեղադրեք գզրոցները իրենց ճիշտ տեղերում:

Կառավարման վահանակ

Բլոկներ և ֆունկցիաներ

< Տիպ 1 >



< Տիպ 2 >



1 Սառնարանի ջերմաստիճան

- Սա սահմանում է սառնարանի թիրախային ջերմաստիճանը:

2 Սառցախցիկի ջերմաստիճան

- Սա սահմանում է սառցախցիկի թիրախային ջերմաստիճանը:

3 *Wi-Fi

- Սրանով սառնարանը միանում է տան Wi-Fi ցանցին:

4 Էքսպրես սառեցում/ Express Freeze

- Կարգավորում է Express Freeze ֆունկցիան:

5 Eco Friendly ռեժիմ

- Սա կարգավորում է էներգախնայողության ռեժիմը՝ նպաստելով էլեկտրոէներգիայի սպառման ծավալների նվազեցմանը:

6 Door Alarm (Դռան ազդանշան)

- Դռան ազդանշանի կարգավորում, ազդանշանը հնչում է, երբ դուռը բաց է մնում:

7 *Արգելափակում

- Սա արգելափակում է կառավարման վահանակի կոճակները:

- Կառավարման վահանակները կարող են տարբերվել մոդելից մոդել:

Կառավարման վահանակի շահագործման ցուցումներ

- Կառավարման վահանակը գործարկվում է հետևյալ դեպքերում:
 - Միացված է սնուցման աղբյուրին
 - Դիպչել էք որևէ կոճակին.
 - Եթե սարքի որևէ դուռը (սառնարանի պահարանի, սառցախցիկի,) բաց է.
- Կառավարման վահանակը ավտոմատ անջատվում է էներգոխնայողության ռեժիմին անցնելու համար հետևյալ դեպքերում՝
 - Երբ անցել է մեկ ռոպե հոսանքի ցանցին միացնելուց հետո
 - Երբ որևէ կոճակը չի գործարկվում կոճակը սեղմելուց 20 վայրկյան հետո
 - Եթե սարքի որևէ դուռ (սառնարանի պահարանի, սառցախցիկի) բացելուց հետո փակվել է և այդ պահից անցել է ավելի քան 20 վրկ.
- Կառավարման վահանակը մաքրելիս մատի կամ մաշկի հպումը կարող է հանգեցնել կոճակի գործարկմանը:

Ջերմաստիճանի կարգավորում

Սա կարգավորում է սառնարանի կամ սառցախցիկի ջերմաստիճանը:

- Սեղմեք **Սառնարանի** կոճակը կամ **Սառցախցիկի** կոճակը ջերմաստիճանը կարգավորելու համար:
- Ջերմաստիճանը կարելի է կարգավորել:
 - Սառնարանում՝ 1 °C-ից մինչև 7 °C
 - Սառցախցիկ՝ -15 °C-ից մինչև -23 °C
- Սկզբնական ջերմաստիճանը ընտրված է:
 - Սառնարան. 3 °C
 - Սառցախցիկ. -20 °C
- Ներքին փաստացի ջերմաստիճանը տարբերվում է՝ կախված սննդամթերքի վիճակից, քանի որ ցուցադրված ջերմաստիճանը թիրախային ջերմաստիճանն է, ոչ թե սարքի ներսում առկա փաստացի ջերմաստիճանը:

Նշումներ

- Ջերմաստիճանի նախնական կարգավորումը կարող է տարբեր լինել մոդելից մոդել:
- Սառնարանը հոսանքի ցանցին միացնելուց հետո սպասեք երկուսից երեք ժամ նախքան սննդամթերք տեղադրելը:
- Շահագործման ընթացքում սարքը կարող է ավտոմատ հայտնաբերել անսարքություններ:
- Եթե անսարքություն է հայտնաբերվել , սարքը չի գործարկվում և ցուցադրվում է սխալի կոդ, անգամ եթե սեղմում եք վահանակի կոճակները:
- Նման դեպքերում մի անջատեք սարքը ցանցից և անմիջապես դիմեք LG Electronics հաճախորդների սպասարկման կենտրոն: Եթե անջատեք սարքը հոսանքից, LG Electronics տեխնոսպասարկման կենտրոնի աշխատակիցը հնարավոր է դժվարությունների հանդիպի անսարքության հայտնաբերման ժամանակ:

Կարգավորել էքսպրես սառեցումը

Այդ ֆունկցիայի օգնությամբ կարելի է արագ սառեցնել սառույցի մեծ քանակություն կամ սառեցված ուտելիքներ:

- Երբ սեղմում եք **Express Freeze** կոճակը, **Express Freeze** նշանը վառվում է վահանակի վրա:
- Ֆունկցիան միանում և անջատվում իր հերթին ամեն անգամ, երբ դուք սեղմում եք կոճակը:
- Express Freeze/ Էքսպրես Սառեցում ֆունկցիան ավտոմատ դադարում է որոշակի ժամանակ անց:

Eco Friendly ռեժիմ

Տվյալ ֆունկցիան թույլ է տալիս շահագործել սառցախցիկ-սառնարանը էներգախնայող ռեժիմում, ինչը հատկապես օգտակար է, երբ գտնվում եք արձակուրդում, քանի որ այս եղանակով նվազեցվում է էլեկտրաէներգիայի սպառումը:

- Սեղմելով **Eco Friendly** կոճակը գործարկում է ֆունկցիան և վառվում է լամպը Է: Կրկին սեղմեք՝ Նույն կոճակը դեակտիվացնելու համար սույն գործողությունը:
- Երբ գործարկված է Eco Friendly ռեժիմը, մյուս կոճակները դեակտիվանում են: Eco Friendly ռեժիմը օգտագործելուց հետո անջատեք այն, որպեսզի մյուս կոճակները ակտիվանան և սառնարանը վերադառնա իր նախկին ջերմաստիճանային պայմաններին:

Դռան ազդանշանային ռեժիմի կարգավորում

Եթե սառնարանի դռները բաց են մնացել (մոտավորապես 1 րոպե), հնչելու է ձայնային ազդանշան, որը կրկնվելու է ամեն 30 վարկյանը մեկ:

- Դռան ազդանշանային համակարգը անջատել-միացնելու համար կարճ սեղմեք Door Alarm կոճակը: Եթե դռան ազդանշանային համակարգը շարունակում է հնչել դուռը փակելուց հետո, ապա դիմեք սպասարկման կենտրոն:

Նշումներ

- Եթե Դուք անջատեք սարքը հոսանքից, այն կպահպանի նախանշված պարամետրերը:

Արգելափակման կարգավորում ու վերակարգավորում

Սա արգելափակում է կառավարման վահանակի կոճակները:


- Սեղմեք և պահեք **Lock** կոճակը 3 վարկյան: Երբ ընտրված է Արգելափակման ֆունկցիան, բոլոր կոճակները արգելափակվում են:

Նշումներ

- Պետք է ապասկտիվացնել Lock ֆունկցիան այլ ռեժիմները գործարկելի դարձնելու համար:

Սառցաման

Լցրեք սառցամանը ջրով մինչև նշված գիծը:



- Լցրեք միայն խմելու ջուր:
- Եթե սառցամանը ծանրաբեռնված է, սառույցի խորանարդիկները կարող են իրար կպչել՝ հանգեցնելով դժվարությունների սառցամանը օգտագործելիս:
- Սեղմեք **Express Freeze** կոճակը կառավարման վահանակի վրա սառույցը արագ պատրաստելու համար:
- Սառույցը կարող էք հեշտությամբ հանել սառցամանից՝ դրա վրա ջուր լցնելով կամ սառցամանը ջրի մեջ թաթախելով և թեթևակի ցնցելով:
- Մի պահպանեք ոչ ամբողջական սառեցված սառույցի կտորներ:
- Եթե չեք օգտագործում սառցամանը կամ սառցե խորանարդիկների դույլը, դրանք կարող են հեռացնել՝ սառցախցիկում ավելի շատ ազատ տարածություն ստեղծելու համար:


Նշումներ

- Խուսափեք ավելորդ ուժ գործադրել սառցամանը թափահարելիս, որպեսզի այն չկտրվի:
- Մի սառեցրեք սառցադույլը: Դույլը կարող է կտրվել՝ հանգեցնելով սարքի խափանման կամ վնասվածքի:


Ճալովի դարակ (կամըտնտրական)

Պահուստավորեք ավելի բարձր առարկաներ, օրինակ գալունային կոնտեյներներ կամ շշեր՝ սեղմելով գգրոցի դիմային կեսի վրա գգրոցի հետևային կեսի ստորին հատվածում: Դուրս քաշել գգրոցի դիմային մասը վերադարձնելով դրանք ամբողջական վիճակին:

- 1 Բարձրացնել գգրոցի առջևի մասը և տեղափոխել հետևային հատված:



- 2 Բարձրացնել գգրոցի առջևի հատվածը և ծալել ետ: Այս վիճակով գգրոցը երկու կողմից կարող է բարձրացվել ազատելով ավելի շատ տեղ:





⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Ապակե գգրոցները ծանր են: Ապակե գգրոցները հանելուց չափազանց զգույշ եղեք:
- Չի թույլատրվում մաքրել ապակյա գգրոցները տաք ջրով, քսի դեռ նրանք սառն են: գգրոցները կարող են կոտրվել, եթե ենթարկվեն ջերմաստիճանի կտրուկ փոփոխության ազդեցությանը:

Օգտագործել LG SmartThinQ ծրագիրը

Նախքան LG SmartThinQ-ի օգտագործումը ստուգեք հետևյալը՝


- Այն սարքերի համար, որոնք զինված են  կամ  logo

1 Ստուգեք սարքի և անլար ինտերնետ մոդեմի (Wi-Fi ցանց) միջև հեռավորությունը:

- Եթե սարքի և անլար ինտերնետ մոդեմի միջև հեռավորությունը չափազանց մեծ է, ազդանշանի ուժգնությունը թուլանում է: Գրանցումը կարող է երկար տևել կամ տեղադրումը կարող է ձախողվել:

2 Անջատեք ձեր սմարթֆոնի տվյալների փոխանակումը կամ **Cellular Data**:


- Այժմների համար՝ անջատեք սմարթֆոնի տվյալները՝ անցնելով **կարգավորումներ** → **բջջային** → **բջջային տվյալներ (Settings** → **Cellular** → **Cellular Data**):



3 Միացրեք ձեր սմարթֆոնը անլար ինտերնետ մոդեմին:



Նշումներ

- Wi-Fi կապ հաստատելու համար, ստուգեք, որ կառավարման վահանակի վրա **Wi-Fi**  պատկերակի լույսը ակտիվացել է:
- Սարքը աջակցում է միայն 2.4 GHz Wi-Fi անլար կապը: Ձեր ցանցի հաճախականությունը ստուգելու համար, կապվեք ձեզ իներնետ տրամադրող ծառայության հետ կամ օգտվեք անլար ինտերնետ մոդեմի ձեռնարկից:
- LG SmartThinQ պատասխանատվություն չի կրում ցանցային կապի միացման որևէ խնդրի կամ որևէ խափանման, թերսարքության կամ սխալների համար, որոնք առաջացել են ցանցին միանալու հետևանքով:

- Եթե սարքը հեռու է տեղադրված երթուղիից, ապա այն կարող է խնդիրներ ունենալ Wi-Fi միացման հետ կապված: Ձեռք բերել Wi-Fi վերահաղորդիչ (ազդանշանի ընդլայնիչ), Ձեր Wi-Fi ազդանշանը բարելավելու համար:
- Wi-Fi կապը չի կարող միանալ կամ կարող է ընդհատվել, տան ցանցային միջավայրի հետևանքով:
- Ցանցային միացումը կարող է ոչ պատշաճ աշխատել՝ կախված ինտերնետ պրովայդերի մատուցած ծառայություններից:
- Շրջակա անլար միավայրը կարող է դանդաղեցնել անլար ցանցային ծառայությունները:
- Անլար ազդանշանի փոխանցման հետ կապված խնդիրների պատճառով սարքը չի կարող գրանցվել: Անջատեք սարքը եւ կրկին փորձեք մեկ րոպե սպասելուց հետո:
- Եթե ձեր անլար երթուղիի թույլատրված firewall է միացված, ապա անջատեք firewall-ը կամ այն ավելացնեք որպես բացառություն:
- Անլար ցանցի (SSID) անունը պետք է լինի անգլերեն տառերի ու թվերի համադրություն: (Մի օգտագործեք հատուկ նիշեր:)
- Սմարթֆոն օգտագործողի ինտերֆեյսը (UI) կարող է տարբեր լինել, կախված բջջային օպերացիոն համակարգից (OS) եւ արտադրողից:
- Եթե երթուղիի անվտանգության հաղորդակարգը (security protocol) սահմանված է **WEP**, ապա հնարավոր է տեղի ունենա ցանցի կարգավորման ձախողում: Խնդրում ենք փոխել այն այլ անվտանգության հաղորդակարգերի (security protocol) (**WPA2** խորհուրդ է տրվում) եւ նորից գրանցել արտադրանքը:

LG SmartThinQ հավելվածի տեղադրում

LG SmartThinQ հավելվածը փնտրեք սմարտֆոնում գետնեղված Google Play Store-ում, կամ Apple App Store-ում: Հավելվածը բեռնելու և տեղադրելու համար հետևեք հրահանգներին:

Նշումներ

- Եթե դուք ընտրեք պարզ մուտքագրում (login)՝ LG SmartThinQ հավելված մուտք գործելու համար, դուք պետք է կրկնեք սարքի գրանցման գործընթացը ամեն անգամ, երբ կփոխեք սմարթֆոնը կամ նորից կբերեք ներքին հավելվածը:

Wi-Fi ֆունկցիա

- Այն սարքերի համար, որոնք զինված են



Սմարթֆոնով հաղորդակցվող սարքի հետ՝ օգտագործելով հարմարավետ խելացի հատկությունները:

Ներկառուցված ծրագրային ապահովման թարմացում

Թարմացրեք սարքի աշխատանքը:

Սմարթ ախտորոշում/ Smart Diagnosis™

Եթե դուք օգտագործում եք Smart Diagnosis ֆունկցիան, ձեզ կտրամադրվեն օգտակար տեղեկություններ, ինչպիսիք են սարքի ճիշտ օգտագործման մասին խորհուրդներ՝ հիմնված օրինակների վրա:

Կարգավորումներ

Ձեզ թույլ է տալիս սառնարնի և հավելվածի վրա սահմանել տարբեր պարամետրեր:

Նշումներ

- Եթե սարքը գրանցելուց հետո փոխել եք ձեր անլար երթուղիչը, ձեր ինտերնետ պրովայդերին կամ գաղտնաբառը, խնդրում ենք ջնջել այն LG SmartThinQ | **Կարգավորումներ → Խմբագրել ապրանքը** եւ կրկին գրանցվել:
- Սարքի բարելավման աշխատանքների նպատակով հավելված ենթակա է փոփոխման առանց օգտագործողների ծանուցման:
- Կախված մոդելի տեսակից՝ ֆունկցիաները կարող են տարբերվել:

Միացում Wi-Fi ցանցին

Wi-Fi կոճակի և LG SmartThinQ ծրագրի համատեղ գործադրումը սառնարանին թույլ է տալիս միանալ Ձեր տան Wi-Fi կապին:

Wi-Fi պատկերակը ցույց է տալիս սարնարանը ցանցին միացված լինելու կարգավիճակը: Պատկերակը միանում է այն ժամանակ, երբ սառնարանը միացված է Wi-Fi կապին:

Սարքի նախնական գրանցում

Գործարկելք LG SmartThinQ ծրագիրը և հետևեք ծրագրի հրահանգներին՝ սարքը գրանցելու համար:

Վերագրանցեք սարքը կամ գրանցեք մեկ այլ օգտատեր

Սեղմեք և պահեք **Wi-Fi** կոճակը 3 վայրկյան, որպեսզի ժամանակավորապես անջատեք այն: Գործարկելք LG SmartThinQ ծրագիրը և հետևեք ծրագրի հրահանգներին՝ սարքը գրանցելու համար:

Նշումներ

- Wi-Fi գործառնության անջատելու համար **Wi-Fi** կոճակը սեղմեք և պահեք 3 վայրկյան: Wi-Fi պատկերանշանը պետք է անջատվի:



Ծանուցում բաց կոդով ծրագրակազմի մասին

GPL, LGPL, MPL եւ այլ բաց կոդով լիցենզիաների տակ գտնվող ելակետային կոդը ստանալու համար, որը ներգրված է այս ապրանքի մեջ, այցելեք <http://opensource.lge.com>:

Բացի ելակետային կոդից, բոլոր հղված լիցենզիոն պայմանները, երաշխիքային հրաժարումները եւ հեղինակային իրավունքի մասին ծանուցումները հասանելի են ներքեռնելու համար:

LG Electronics-ը տրամադրում է բաց ելակետային կոդը նաև CD-ROM սկավառակով՝ վճարի դիմաց, որը ծածկում է այս առաքմանը առնչվող ծախսերը (մասնավորապես, մեդիա կրիչի, բեռնափոխադրման և բեռնաթափման արժեքը): Առաքումն իրականացվում է opensource@lge.com հասցեին ուղարկած հայտի հիման վրա: Տվյալ առաջարկը վավեր է երեք տարի ժամկետով՝ արտադրանքի առաքման վերջին օրվանից սկսած: Առաջարկը գործում է բոլոր նրանց համար, ովքեր ստացել են այս տեղեկությունը:

Smart Diagnosis™ օգտագործելով Սմարթ հեռախոս

- Այն սարքերի համար, որոնք զինված են  կամ  logo

Օգտագործեք սույն ֆունկցիան, եթե Ձեզ անհրաժեշտ է LG Electronics հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոնում ճշգրիտ աշտորոշել սարքի անսարքությունը կամ խափանման պատճառները:

Smart Diagnosis™ հնարավոր չի ակտիվացնել, եթե սարքը միացված չէ հոսանքին: Եթե սարքը հնարավոր չէ միացնել, ապա անսարքությունների վերացումը պետք է իրականացվի առանց Smart Diagnosis™ գործարկման:

Smart Diagnosis™ Հաճախորդների տեղեկատվական անվտանգության կենտրոնի միջոցով


Օգտագործեք սույն ֆունկցիան, եթե Ձեզ անհրաժեշտ է LG Electronics հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոնում ճշգրիտ աշտորոշել սարքի անսարքությունը կամ խափանման պատճառները: Օգտվեք այս ֆունկցիայից հաճախորդների տեղեկատվական աջակցության կենտրոնի մասնագետին տրամադրելու համար, ոչ թե ամենօրյա նորմալ շահագործման ընթացքում:

Ցուցադրման վահանակը սառցարանի դռան վրա է:

- 1 Բացել սառցարանի դուռը:
- 2 Սեղմել և սեղմած պահել **Սառցախցիկ** կոճակը երեք վարկյան կամ ավել:



- 3 Պահեք հեռախոսը բարձրախոսի անցքի ուղղությամբ վերևի աջ հատվածում:




